«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒԹՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

ՀՈԴՎԱԾ 20. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Բանկի հիմնադիր փաստաթուղթը բանկի կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են բանկի հիմնադիրների, մասնակիցների եւ կառավարման մարմինների համար:

2. Կանոնադրությունը սահմանում է՝

ա) բանկի լրիվ եւ կրճատ ֆիրմային անվանումը.

բ) բանկի գտնվելու վայրը.

գ) բանկի կազմակերպական-իրավական ձեւը.

դ) բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի համար՝ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեսակները (սովորական եւ արտոնյալ), քանակը, անվանական արժեքը, ինչպես նաեւ արտոնյալ բաժնետոմսերի ձեւերը, յուրաքանչյուր տեսակի եւ ձեւի բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները.

ե) բանկի կանոնադրական հիմնադրամի չափը.

զ) բանկի կառավարման մարմինների կառուցվածքը, իրավասությունը եւ նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը.

է) բանկի հիմնադիրների եւ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման եւ անցկացման կարգը, ներառյալ այն հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ որոշումները պետք է ընդունեն ընկերության կառավարման մարմինները՝ պարզ մեծամասնությամբ կամ միաձայն:

ը) բանկի հայեցողությամբ տեղեկություններ բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների մասին, ինչպես նաեւ բանկի կողմից մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների ստեղծման եւ գործունեության դադարման կարգը.

թ) հիմնադիր բանկի կողմից բանկին տրված լիազորությունները (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում).

ժ) բանկի նկատմամբ հիմնադիր բանկի կողմից հսկողություն իրականացնելու կարգը (օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում).

ժա) բանկի լուծարման կարգը.

ժբ) օրենքով եւ այլ իրավական ակտերով նախատեսված այլ դրույթներ:

Բանկի կանոնադրությամբ կարող են սահմանվել բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ հիմնադրամի կամ մասնակցի մասնակցության (բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերում՝ բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի) առավելագույն չափը:

3. Ցանկացած անձի պահանջով բանկը պարտավոր է նրան հնգօրյա ժամկետում ընձեռել կանոնադրության, կանոնադրության լրացումների եւ փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն: Բանկը պարտավոր է այդ անձի պահանջով նրան տրամադրել բանկի գործող կանոնադրության պատճենը: Վճարը, որը գանձվում է բանկի կողմից կանոնադրության պատճենը տրամադրելու համար, չի կարող այդ պատճենը պատրաստելու ծախսերից մեծ լինել:

4. Բանկի կանոնադրության մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարվում են, ինչպես նաեւ բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում՝ ձայների երեք քառորդով ընդունված որոշմամբ: